

ՆԱՀԱՆՋԸ ԵՎ ԿԱՐՈ ՓՈԼԱՏՅԱՆԻ «ԿՅՐԱԺԱՐԻՍ ՀԱՅՈՒԹԵՆԵ» ՎԵՊԸ

Արձակագիր, բանաստեղծ, քննադատ Կարո Փոլատյանի անունն սկսած անցյալ դարի 40-ական թթ. հնչում է Սփյուռքում: Նրա առաջին վեպը՝ «Արևելքի տղաքը», որ լույս տեսավ 1946 թվականին, Փարիզում, թե՛ գրական շրջանների, թե՛ ընթերցողների կողմից գտավ ջերմ ընդունելություն: Տարիների վաստակով նա հաստատեց իր տեղը սփյուռքահայ այնպիսի գրողների կողքին ինչպիսիք էին Շահան Շահնուրը, Ջարեհ Որբունին, Հրաչ Ջարդարյանը, Լասը՝ դառնալով Նահանջի գրական ավանդների ճշմարիտ ժառանգորդն ու շարունակողը: Նրա քերթողագրքերը՝ «Արևելքի տղաքը», /1946/, «Կը հրաժարիմ հայութենե՝/1949/, «Արծիւները անապատին մէջ»/1953/, «Որդիք որոտման» /1954/, «Վերադարձը»/1955/, «Կրակէ շապիկը»/1966/ վեպերը,, «Յօթը պատմուածք»/1966/ պատմվածաշարը, «Լոյսերը» /1964/ բանաստեղծական ժողովածուն, «Ջրոյց» /1952 -1979/ հինգ հատորանոց գրադատական էջերը, «Հայկ. Սփիւռքը իր դերակատարներով» /1980/ աշխատասիրությունը, տասնամյակներ շարունակ գրական շարժման ծանրություն են կրել իրենց ուսերին:

«Վիպական եւ վիպակային իր գրեթէ բոլոր ստեղծագործութեանց մէջ,- գրում է Մինաս Թեփեփյանը,- Փոլատեան 1915ի աղէտին տխրութիւնը պատումի կը բերէ խորշում թելադրող թանձր յուզականութեամբ մը, երբեմն իր գործերու թելադրական ներգործութիւնը անտեսելու, խտութեան եական հարկը անտեսելու գնով,- այսուհանդերձ՝ չի խաբուի ռդբերգականութեան մէջ եւ կը հասնի վերապրումի մեր կամքը, Հայուն վերընծիւղ կեանքն ու գոյապայքարը իր ամենէն պայծառ ու տիրական գիծերուն մէջ ներկայացնելու նուաճումին»:¹

1949թ. Փարիզում լույս է տեսնում Կարո Փոլատյանի երկրորդ վեպը՝ «Կհրաժարիմ հայութենեն» վերնագրով: Ուշադրության կենտրոնում դարձյալ սփյուռքահայն է՝ իր նյութական, բարոյափոփոխական խնդիրներով: Քննության այս ելակետը հնարավորություն է ընձեռում խնդրի խորքային և համակողմանի վերլուծությանը: Վեպը ներկայացնում է դարասկզբի սփյուռքյան կյանքի տագնապները՝ աղետով անցած հալածյալի ծանր ողբերգությամբ, կյանքի մոր պայմաններում հարազատի և օտարի անընդհատական բախում-

¹ Մինաս Թեփեփյան, Դար մը գրականութիւն, Բ հատոր, Բոստոն, 1978, էջ 333:

ներով, ապագայի հանդեպ վախի, անորոշության հուսաբեկ զգացողություններով և իբրև այս ամենի հետևանք՝ ուժացման, ինքնության կորստի իրական վտանգով: Եթե Շ.Շահնուրը վեպում նահանջի ու նահանջողականության խնդիրը տանում է ազգային պատմության և ազգային նկարագրի քննության դաշտ, Ձ.Որբունին սոցիալական հարթություն, ապա Կ. Փոլատյանը այս երկուսի միասնական պատկերն է տալիս: Ազգային հիմնահարցերի բաց և շիկացած դրսևորմամբ այս գիրքն առանձնանում է Փոլատյանի վիպարվեստում:

«Փոլատեան նոր մըն է, որուն ո՛չ տաղանդը, ո՛չ պատրաստութիւնը եւ ո՛չ ալ շնորհը կը պակսին իբրեւ գրագետ եւ մանաւանդ իբրեւ վիպագիր,- գրում է Յակոբ Տեր-Յակոբեանը,- երեք տարուան մէջ իր տուած երկու վէպերը- *Արեւելքի տղաքը* և *Կը հրաժարիմ հայութենէ* - վկայութիւն մըն են իր աշխատանքին եւ գրական նուիրումին, որչափ ալ թերութիւններ պարունակեն անոնք. մասնաւորապէս կառոյցի տեսակէտէն»²:

Կ. Փոլատյանը սփյուռքահայ այն գրողներից է, որոնք վեպը արժևորում են նրա մեջ տեղ գտած նկարագրություններով: «Արդի վիպագիրները կեանքի ամնշան շերտեր կու տան յաճախ, փոխանակ ամբողջական նկարագիրներու,- գրում է Կ. Փոլատյանը իր «Ձրոյց եւ գրական ուսումնասիրութիւն» աշխատության մեջ, - ինչպէս բանաստեղծութեան մէջ, նկարչութեան, վէպի մէջ ալ կը գոհանան ուրուագիծերով: Ժամանակակիցներու վէպերը, նոյնիսկ տաղանդաւորներու, նոյն հպանցիկ, արագ, անաւարտ տպաւորութիւնը կը ձգեն»³:

Ահա թե ինչու իր վեպում նա մեծ տեղ է հատկացնում նկարագրություններին: Կ. Փոլատյանը վեպում առաջին անգամ փորձում է պատումի նկարագրողականությունը համադրել շարժանկարային դրվագների և ներքին «տեղազնություն» հետ, կարևորում է դեռևս չգիտակցված և խոսքի չվերածված բնագոյների հակումը, ճիգ է գործադրում սփյուռքյան խնդիրը փոխադրել մարդու և մարդկայինի՝ առավել ընդգրկուն տարածք: Նա երևույթը հաճախ փորձում է քննել ոչ թե արտաքին առարկաների հետ օբյեկտիվ հարաբերությամբ, այլ նույն առարկայական ներթափանցողությամբ, սյուբյեկտիվ հայացքին՝ «ներապրումին» ապավինելով: Չմայած դրան՝ նա իր վեպում հարաբերականորեն պահպանում է օբյեկտիվ քննական կերպը: Կ. Փոլատյանը վեպում գործողությունների հոգեբանական խորքի զարգացումը ամբողջությամբ վստահում է զխավոր հերոսին՝ Բաբկենին: Առաջին դեմքի պարագան նյութի օբյեկտիվ մատուցման կայունություն չի խոստանում, թեև հեղինակին հաջող-

² «Յառաջ», Փարիզ, 1949, 25 սեպտեմբեր, էջ 2:

³ Կարո Փոլատեան, «Ձրոյց եւ գրական ուսումնասիրութիւն», Բ հատոր, Գահիրէ, 1961, էջ 82:

վում է պահպանել օբյեկտիվի և սյուբեկտիվի հավասարակշռությունը: Կ.Փոլատյանի հերոսը հակված է դեպի վերլուծական տարրը, անձնական փորձառության բերած դասերը: Մեմախոսությունը հեռանում է հեղինակի «օբյեկտիվ» նկատառումներից, լցվում գեղարվեստական հարուստ նշանառությամբ, դառնում վիպական զարգացման ակնառու գործոններից: Այն ունի հարաբերական ինքնուրույնություն, խաղում է առաջնային դեր գրական պատկերի մատուցման մեջ: Վեպը շարադրված է պարզ ու բնական, առանց շլացուցիչ տարրերի. չկա հայտնության միտում. Փոլատյանը ներկայացնում է ոչ միայն իր սերնդի, այլև՝ ժողովրդի մեծ հատվածի ողբերգությունը, նրա օրավուր նահանջը:

Ժամրային տեսակետից յուրահատկությունն այն է, որ պատումի մեջ գրողը հավատարիմ է լուսանկարչական ճշգրտությանը, որն ականայտորեն գերադասում է գեղարվեստական հյուսվածքից: Գրեթե ժամանակագրական տարեգրության սկզբունքով են կերտված դարասկզբի Փարիզը, Երկրորդ Աշխարհամարտը, դիմադրական շարժման մասնակիցները, հայաստանցի զինվորները: Հիշողությունների միջից հառնում են կենդանի գծված դրվագային հերոսներ կամ մանրամասներ՝ մայրը, ընկերները, Սիրարփին:

Վեպի զարգացման ընթացքը տանում է ժամրային օրինաչափության հերոսի և միջավայրի, հերոսի և հասարակության բախման, որը կազմում է դիպաշարի առանցքը: Վեպի հերոսները գաղթահայեր են, որոնց բոլորին միավորում է ընդհանուր մի ճշմարտություն. «Եթե ուզեք ուշադրութիւն ընել, քիչ մը խորանալ անոնց հոգիներն ի վար, պիտի տեսնէք թէ այդ խառնիճադանճին մէջ, այդ չգումարուող մարդկային կոտորակներուն համար, կայ սակայն, կայ անպայման, բոլորէն ընդունուած եւ անկեղծօրէն յայտարարուած, միակ հասարակ յայտարար մը.՝ իրենց Հայութիւնը»⁴:

Կ. Փոլատյանը վեպը գրելիս դիմել է բազմապլանային դիպաշարի կառույցին՝ գրական հմտությամբ տալով սփյուռքահայ կյանքի ժամանակակից պատկերները, հասարակական և ազգային երևույթների նկատմամբ իր հստակ մոտեցումները: Սյուժեն չորս տարբեր ճյուղավորում ունի՝ Բաբկենի, պարոն Նիկողոսի, պարոն Ղուկասի, ֆրանսուհի տիկին Հանրիեթի ընտանեկան, ընկերային միջավայրերը՝ թե՛ ներքին, թե՛ արտաքին կյանքով: Չորս տարբեր ընտանիքներ, ինքնատիպ միջավայրեր, տարբեր սոցիալական աշխարհներ՝ առանձնահատուկ ըմբռումներով, բարոյական վարքագծով: Վեպում բազմաձև երևույթը բխում է կյանքը առավել ամբողջական կտրվածքով արտացոլելու ձգտումից: Բուն գործողությունները ծավալվում են Բաբկենի ընտանեկան,

⁴ Կարօ Փոլատեան, Կը հրաժարիմ հայութենէ. Փարիզ, 1949, էջ14:

ընկերային միջավայրի ուրվագծումով, որտեղ կենտրոնական տեղ է զբաղեցնում Բաբկենի տառապանքներով լեցուն կյանքը: Այս հիմնական սյուժետային գիծը աստիճանաբար իր մեջ գործողությունների երկրորդական զարգացումներն է ներառում: Վեպի հաջողվածությունը մեծապես պայմանավորված է գլխավոր հերոսի՝ Բաբկենի կերպարի վառ արտահայտչականությամբ: Ցավի և դառնության, բողոքի և անհուսության գեղարվեստական խտացում է այս կերպարը, մեկն այն հազարավորներից, որ ապրել է ջարդի ու գաղթի սարսափը, դրոշմել այն պատանեկան հոգում և շարունակել կյանքն այդ խարանով:

«1915, ընդհանուր տեղահանութիւն: Սարսափ, սարսափ, մարսափը գաղթականներուն. անօրինութիւն, ծարաւ, սով, արիւն, մահը ամէն կողմէն, մահը, դժողքը, դժողքը: Կը բաւէ ըսել միայն թէ գացած եմ մինչեւ Տէր-Ձօր: Ամէն հայ կը հասկնայ թէ ինչ կը նշանակէ այդ: Ես ու մայրս միայն վերադարձած ենք զարհուրելի սպանդանոցէն, բազմանդամ գերդաստանէն միայն երկուքս: Զինադադար. վերադարձ դէպի հայրենիք: Ուրախութեան կարճ պահ մը, եթէ երբեք տրուած է ուրախութիւն մը՝ դժողքէն վերադարձողներուն համար: Սիւտոր օրեր դարձեալ. նահանջ. խուրիա. որբանոց, մախակոթութիւն...»:

Դժվարին գոյապայքարը չի ընկճել նրան, ավելին՝ նրա մեջ ամրացրել է հակադրվելու ոգին, որը ազգային լավագույն հատկանիշների պահպանության գործոններից մեկն է: Նա հիմնել է իր ազգային կուսակցությունը՝ հավատացած, որ այն կնպաստի հայապահպան վեհ գործին: Նա իր շուրջն է համախմբել հայրենասեր հայ երիտասարդների, նրանց, ում համար ազգայինը վեր է ամեն ինչից: «Կը տեսնէիք ի հարկէ, որ ամէն տարիքի եւ դասակարգի մարդիկ կան հոն: Ինչ ալլազան նկարագիրներ: Տարբեր կազմութեամբ, իմացական ու զգացական ապրումներով, կը լսէք որ անոնք կ'արտայայտեն յաճախ միտքեր, որոնք տրամագծօրէն հակառակ են իրարու: Եօթը ընկերներ ենք, եւ մենք, ամէն մէկս կը կազմենք տեսակ մը հայ: Այդպէս է որ հիմա հողին վրայ կա եօթը տեսակ հայ: Յախումն, անկեղծ, ցաւատաք, յօթը պինդ գլուխներ, եօթը լաւ հայեր: Այդ խառնիճադանճին մէջ, կայ սակայն, կայ անպայման, բոլորէն ընդունուած եւ անկեղծօրէն յայտարարուած, միակ հասարակ յայտարար մը, իրենց Հայութիւնը»: Նրանցից ամեն մեկը ունի իր հայափրկիչ ծրագիրը, օրինակ՝ Գեղամը իրենց՝ սփյուռքով ցրված հայերի համախմբումը կորսված հայրենիքում փորձում է իրականացնել միայն պատերազմելով. «Զէ՞ք տեսներ թէ աշխարհը ալլես ուրիշ լեզու չի հասկնար: Զարկ, պայթեցուր, մտիկ կ'ենն քեզ: Զարկ, կը տեսնեն, կը զգան միայն այն ատեն թէ դուն ալ կաս, դուն ալ կ'ապրիս: Ճառեր, խնդրագիրներ, լաց, աղաչանք, արդարութիւն, քրիստոնէութիւն, ապուշ բաներ, հինցած, ալ անգոր զէնքեր են ատոնք: Ռումբ, ռումբ,

ամեն բան այս է այսօրուան մարդոց համար, ձեզի կըսեմ թէ ուրիշ լզու չեն հասկնար...»: Նույն ձևով է մտածում նաև Նշանը: Նա ոչ միայն ցանկանում է մարդկությանը ցույց տալ իրենց աննկուն ուժը, այլև ընդարմացած վիճակից դուրս բերել հայրենակիցներին: «Մէկ ռումբ կը բաւէ որ ան արթննայ, ցնցուի, զգայ թէ դեռ հայ է. մէկ ռումբ անելի հայ կը փրկէ քան թէ տասը հատ հանդէս: Մէկ ռումբով մէկ երկու հայեր կ'երթան, բայց կը փրկուին հազարավորները»:

Իսկ ահա Ջավենը իրենց փրկության միակ միջոցը տեսնում է մայր հայրենիք վերադառնալու մեջ. «Պէտք է կանգնենք մեր հայրենիքին կողքին, միակ ճշմարտութիւն այս է»: Բանկենը կարողացել է տևական մի ժամանակաշրջանում ամուր պահել խմբի գոյությունը: Վեպի հերոսները հաճախ վիճում են, ըմբոստանում, ճառեր ասում, բայց ի վերջո տեղի են տալիս: Բաբկենը ցավով էր տեսնում ազգակիցների լուռ ու աստիճանական հեռացումը ազգային, նրանց օրավուր նահանջը: Դա Բաբկենի համար մեծ ողբերգություն էր: Նա փորձում է խելքի բերել իր հայրենակիցներին, նահանջի դեմն առնել և իր գաղափարակից ընկերների հետ փրկության միջոցներ է որոնում և գալիս է այն տխուր հետևության, որ պետք է պայքարի միասնական ծրագիր ունենան, այն ինչը ժամանակին չեն ունեցել կուսակցություններից և ոչ մեկը, որոնց ամփոփեմ գործունեության պատճառով հայորդիները մասնատվել են, երկիրը կործանվել է, դեռ այսօր էլ շարունակվում է ցաքուցրիվ հայորդիների տարանջատումը:

«Դաշնակցութիւնը տարրալուծեց, խառնեց իր ժողովներուն, մեզ ժողովականներ դարձուց, փոխանակ ամէն մէկէս մէկ մէկ ռումբ դարբնելու. ոչ ես հաւատք չունիմ այլեւս, մեռցուցին այն սերունդը որ կրնար բան մը ընել: Անոնք են պատասխանատուները, միայն այդ կուսակցութեան ղեկավարներն են այս վիճակին պատասխանատուները: Դաւաճանեցին մեզ, մեր իտէալները, թրքահայ դատը: Իրենք՝ զառամած, անկարող, շշմած իրենց կորսնցուցած աթոռներէն, չձգեցին նոյնիսկ որ իրենցմէ դուրս ուրիշներ զբաղէին այդ սուրբ գործով, հալածեցին, խորտակեցին ամէն լաւ տրամադրութիւն, ամէն հեղափոխական շարժում»: Սփյուռքահայ ամբողջ երիտասարդությունը, եթե ոչ նրա իրատես մեկ թըը խիստ հիասթափված է հայ կուսակցական գործիչների երեկվա անարդյունավետ պայքարից, այսօրվա զգվառութից: Դրա վառ ապացույցն է այն փաստը, որ դաշնակցության շատ անդամներ, նույնիսկ նրա ղեկավարներից, անդառնալիորեն իրենց կապերը խզեցին այդ կազմակերպության հետ և սկսեցին պայքարի նոր ուղիներ որոնել, ինչպես օրինակ Բաբկենը և իր ընկերները: Բաբկենը իր առջև նպատակ է դրել համախմբել աշխարհասփյուռ տարակարծիք հայությանը մեկ ընդհանուր հայափրկիչ գաղափարի շուրջ, այդ տարակարծության մեջ է հերոսը տեսնում նրանց անհաջողության պատճառը,

ավելին՝ նահանջի պատճառը: Ինչն է այդպես անհամաձայնում, վրդովվեց-
նում հերոսին. իրեց ծանր վիճակը, օտարի արհամարհանքը: Պարզվում է, որ՝
ոչ: Հերոսը ունի մտահոգվելու առավել կարևոր պատճառ. «Մէկուն համար հայ
եկեղեցին է իր հայութիւնը, հայոց երգերը, միւսին համար հայ մայրերուն հոգին
եւ նաեւ անոնց եփած կերակուրները: Երրորդի համար իր տառապանքն է իր
հայութիւնը, իր քաշած նեղութիւնները, կրած զրկանքները: Եթէ նկատած էք
բոլոր տեսակի այս ըմբռնումներուն մէջ հիւանդագին կողմ մը կայ»: Բաբկենը
գտնում է որ դրա դեմն պետք է առնել, բայց ինչպես: Այս է, որ մտահոգում է
հերոսին և ի վերջո կանգնեցնում հուսալքության առջև, և անկարող այլևս
պայքարել, նա հեռանում է ինչպես իր ընկերներից, սիրած աղջկանից, այնպես
էլ իր հայկական միջավայրից, սակայն կրկին ետ է վերադառնում՝ գտնելու իր
Սիրարփիին, որի սերը ամարգել էր: Միակ հարազատը այս օտար երկրում
մնացել է Սիրարփին: Մայրն այլևս չկար, նրա մահը հոգեպես ցնցել էր հերոսին,
նա էր որ հայի ոգին ամուր էր պահում որդու հոգում, չնայած միջավայրի հայի
հանդեպ անհարգալից վերաբերմունքին: Սակայն տեսնելով Սիրարփիին
ուրիշի հարկի տակ՝ Բաբկենը մեկընդմիշտ հեռանում է իր հայությունից: Սի
կողմից հայրենիքի կորստյան ցավի մեկուսի և լուռ վերապրումը, մյուս կողմից
հին ու նոր արժեքների բախումը, վիճակի անհաստատությունը, նյութական
անապահովությունը նպաստում են հերոսի բարոյական խտրորումներին:

4. Փոլատյանի հերոսը՝ Բաբկենը, ինչքան էլ անհատականազված
լինի, մնում է տիպաբանական կերպար. նա այն հայն է, որ ընդդիմանալով
ուժացման վտանգին, չի կարողանում սահմանազատվել նահանջի հետա-
պնդումներից, արարքները ավելի են մխրճում նրան օտարության ճահիճը:
Բաբկենի անցած ճանապարհը համընդհանուր է. այդպես շարժվում է մի
ամբողջ սերունդ: Ճիշտ է, Բաբկենը կանխատեսող չէ, «շարքային» ֆրանսահայ
է, բայց գրողը վճռում է նրա մեջ բեկել ազգային-հասարակական տագնապների
ոսպնյակը. նրա միջոցով ցույց է տալիս հայամենա ու հայակորույս վիճակները:

4. Փոլատյանի հերոսը սփյուռքահայ զրականության այն բացառիկ
կերպարներից է, որ հոգեկան ծանր ընկճվածության պահերին դեմ է դուրս
գալիս իրեն, իր ազգությանը. «Ճղճիմ մարդի՛կ, ստոր բոլորդ ալ, մեռնող
ժողովուրդի մը վերջին մնացորդները, Օփճացածներ, խեղճ մարդիկ. կը
հրաժարիմ ձեզմէ, բոլորեդ. լսեցի՞ք, հասկցա՞ք, կը հրաժարիմ ձեր միութենէն,
ձեր ընկերակցութենէն...կը հրաժարիմ հայութենէ...»:

Բաբկենը փոխում է իր ազգանունը, ավելին՝ ազգությունը, դառնում է
ֆրանսիացի ժորժ Օպեր, ամուսնանում է պարկեշտ մի ֆրանսուհու հետ
փորձելով մեկընդմիշտ մոռանալ իր ազգությունը, սակայն ներքին մի մղում

նրան միշտ ետ է տանում դեպի իր արմատները: Նա որպես սուրբ մասունք պահում է մորից իրեն հիշատակ մնացած փոքրիկ սնդուկը. «ուր,- գրում է Յակոբ Տեր-Յակոբեանը,- կայ մօր շալը, Նարեկ մը եւ հայերէն երգարան մը, զոր զանձի մը ահագնութեամբ հետը կ'պտտոցնէ մինչեւ իսկ պատերազմի դաշտին վրայ»⁵: Սա պարզ վկայությունն է այն բանի, որ Բաբկենը իր կապը մեկընդմիշտ չի խզել իր ազգությունից , իր հոգու դռները չի գոցել հայության առջև և վաղ թե ուշ վերագտնելու է իրեն: Լիովին ազգուրաց մարդը չէր կարող իր կյանքը վտանգելով փրկել հայրենակիցների կյանքը. նա, որ պատերազմի առաջին իսկ օրերից դարձել էր դիմադրական շարժման ակտիվ մասնակից, դա անում է մեծ ոգևորությամբ, նրա մեջ կրկին արթնանում է սերը դեպի հայրենիքը՝ Հայաստանը, դեպի հայը, որից նա այնքան հիասթափված էր, որը իրեն հույս չէր ներշնչում: Բայց ահա հայաստանցի զինվորների անվեհեր հայրենասիրության ու քաջության շնորհիվ Բաբկենը վերագտնում է իրան: Այստեղ՝ ռազմի դաշտում, իրենց դիմադրական խմբակի մեջ հերոսը հանդիպում է «փոքրիկ Արմենիենին», փրկում այդ ընկեցիկ տղայի կյանքը, որը իր զավակն էր, որի գոյության մասին ինքը ոչինչ չգիտեր: Բաբկենը ուզում է ամեն ինչ մորից սկսել: Նա որդու հետ մեկնում է Մարսել, որ հաշտվի Սիրարփիի հետ, սակայն վերջինս հրաժարվում է նրան տեսնել, նա որդու հետ պատրաստվում է մեկնել Հայաստան: Բաբկենը ցանկանում է նրանց միանալ: Հայրենիքը նրա համար դառնում է կյանքի նպատակ: Նա համոզված է, որ երջանակի պետք է լինի հայրենի հողի վրա, որ պիտի վերադառնա իր հարազատ ընտանիքի գիրկը և կողքին պետք է լինի իր հարազատ զավակը: Հայրենիքը նրա համար փրկության հանգրվան է: Սակայն որպես ֆրանսիացի նրան թույլ չեն տալիս մեկնել Խորհրդային Հայաստան: Բաբկենը կորցնում է ամենակարևոր կենսատու ուժը՝ հույսը: Շ.Շահնուրի Լոխումի մման ո'չ թողնում են հեռանալ, ո'չ էլ ինքն է կարողանում արդեն հարմարվել: Այդ անել ջղագրգիռ վիճակը նրան հասցնում է խելագարության: Նա այլևս չի հասկանում՝ ինչ է կատարվում իր շուրջը և անընդհատ կրկնում է «...ես Անդրանիկն եմ, քաջ Անդրանիկը...ինչո՞ւ Օպեր կ'ըստք ինձի, իմ անունս Օպեր չէ...Անդրանիկ է իմ անունս, Անդրանիկ... «Անդրանիկը քաջ իւր զինուորներով...»⁶: Բաբկենը կործանվում է ֆիզիկապես: Նրա դրաման ավարտվում է ողբերգությամբ: «Կը տեսնենք որ վէպը բաւական հարուստ նիւթ մըն է,-գրում է Բ.Տեր-Հակոբյանը,- եւ Փօլատեան կրցած է զայն տանիլ այնպէս

⁵ «Յառաջ», Փարիզ, 1949, 25 սեպտեմբեր, էջ 2:

⁶ Կարօ Փօլատեան, Կը հրաժարիմ հայութենէ, Փարիզ, 1949, էջ 298:

որ մեկ շունչով կը կարդաս: Հակառակ իր ոճին սահունութեան, գեղեցիկ պատկերներուն, բանաստեղծական էջերուն եւ վիպական գիւտերուն, վեպը կը պարունակէ շատ կնճիռներ»⁷: Այո՛, վեպում տեղ են գտել մի շարք թերութիւններ, որոնց վրա գրողը պիտի ծանրացներ ուշադրութիւնը: Կ.Փոլատյանի վեպում նկատվում է գեղարվեստական ուշագրավ շրջադարձ «ինքնուրույն» հերոսից դեպի հայեցող, վերլուծական հերոսը, որը գրողի խոհերն ու տրամադրութիւններն է ներկայացնում: Ֆրանսահայ գրողը նեղացնում է վիպական հերոսների տեսադաշտը իր հախուռն «միջամտութեամբ», ժամանակի ազատ մեկնաբանմամբ, որով քիչ տեղ է թողնում գործողության օբյեկտիվ ընթացքին: Չի կարելի չհամաձայնվել Վահե-Վահյանի գրեթե սպառիչ այն նկատառումներին, որոնք բացում են ստեղծագործության թերի կողմերը. «Հիւանդագին վիճակ մը ունին բոլոր հերոսները: Կը խոսեն չափազանց շատ, նոյն առատաբան ոճով, նոյն կրկնութիւններով, նոյն տենդով: Պզտիկ, միհար, անօգնական գաղափարի մը կառչած, կը սիրեն անոնք խորհրդածել, բացատրել, ընդլայնել եւ անճանաչելի դարձնել բուն միտքը հեռուներէն ճարուած, երբերուն եւ անհատակ իմաստասիրութեան փշրանքներ հրաւիրելով իրենց օժանդակ-մասնաւորաբար այն պարագաներուն, երբ ազգային, քաղաքական, հոգեբանական կամ բարոյական հարց մը նեղը կը ձգէ իրենց: Որպէս ազգային քաղաքականութեան ուղեծրում, գաղափարական տեսակետով անյարիր միտքերու հանդիսարան մըն է վեպը»⁸:

Ասված է ճիշտ, բայց ճշմարիտ հայեցակետով: Մեր կարծիքով, «Կիրաժարիմ հայութենէ» վեպի ակնառու թերութիւնները գաղափարական-կառուցվածքային բնոյթի են, ինչը թուլացնում է ակնկալվող տպավորութիւնը: Ակնհայտ է, որ այն զիջում է Շ.Շահնուրի, Ջ.Որբունու, Հ. Զարդարյանի վեպերին: Վեպում անհարկի շատ են մեջբերումները, երկարաբանութիւնը խանգարում է ասելիքի որոշակի ուղղութեան ընկալմանը, առաջ քաշված հարցերին գրողի աճապարանք պատասխանները զնահատվում են ավելի շատ որպէս քարոզչական ջանք:

Զնայած վեպում տեղ գտած մի շարք թերութիւններին՝ Փոլատյանի այս վեպը դասվում է 40-50-ական թթ. Նահանգի գեղարվեստական մեկնութեան լավագոյն ստեղծագործութիւնների շարքը:

⁷ «Յառաջ», Փարիզ, 1949, 25 սեպտեմբեր, էջ 2:

⁸ «Անի», Պէյրուս, 1949, 4 տարի, թիւ 9, էջ 503: